

ԱՌ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ Տ. Տ.

ԳԱՐԵԳԻՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

*Ս. Էջմիածին*

Վեհափառ Տէր,

Շնորհակալութեամբ ստացանք Հոգշ. Հ. Սահակ ծայրագոյն վրդ. Ճեմնեմեան Մխիթարեան Միաբանութեան Ընդհ. Արքեպիսկոպոսի մահուան առիթով ուղարկուած Ձեր ցաւակցութեան գիրը:

Մխիթարեան միաբանութիւնը կորսնցուց իր Հայրը, Հայ ժողովուրդը՝ իր Վարդապետը, իսկ Հայ մշակոյթը՝ անխոնջ Ուսումնասէրը:

Ձեր ազնիւ զգացումները մեր անմխիթար սրտերուն համար դարձան ամոքիչ րալստան: Մարդկօրէն՝ վերջնական բաժանումը խոր վէրք մը կը թողու բոլոր սիրելիներուն սրտին մէջ, որո՞ւ սպիացման միակ միջոցը յաւիտեանական կեանքի հաւատն է, անյեղաշրջելի երջանկութեան յոյսն է, յարութեան ապահովութիւնը:

Աստուծոյ հայրական նախախնամող Ձեռքերէն ընդունելով այս դառնանաշաքի բաժակը՝ «Եդիցին Կամֆ ֆո» մեր սրտերու խորէն կ'արտասանենք եւ մեր աչքերը անթարթ սեւեռած դէպի յաւերժական Հայրենիք գօտեպինդ, կը փութանք իրագործել մեր Երանաշնորհ Հիմնադրին՝ Մխիթար Սեբաստացիի բնարանը՝ ապրելու բոլորանուէր կեանք մը՝ «ի հոգեւոր օգուտ եւ ի լուսաւորութիւն Ազգին մերոյ Հայկազնոյ»:

Ձգացուած ենք, Վեհափառ Տէր, Ձեր հայրական խնամատար որոշումին համար՝ հոգեհանգստեան պաշտօն կատարելու մեր հանգուցեալ Արքեպիսկոպոսի հոգւոյն խաղաղութեան համար: Բարեգութն Աստուած լսէ Ձեր աղօթքները եւ մխիթարէ մեզ բոլորս:

Կրկին շնորհակալութիւններ Ձեր սրտակցութեան եւ խնկարոյր աղօթքներուն:

Հ. ՍԵՐՈԲ ԶԱՄՈՒՐԷԱՆ

ԸՆԴՀ. ԶԱՐՏՈՒՂԱՐ

ՄԽԻԹԱՐԷԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Սուրբ Ղազար,

16 հոկտեմբեր 1996 թ.